Անձնական համար՝_____ ԱԱՀ՝ _____

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Դպրոցական փուլ - 5-րդ դասարան - 120 բոպե

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.

Ամեն տեղ գույների խաղ էր ու խնդություն: Բոլորը ուրախ էին ու երջանիկ, իսկ ամենից շատ ուրախ ու երջանիկ էր ծաղիկը. նրա ծննդյան օրն էր: Ծաղիկը ո՛չ կապույտ էր, ո՛չ ճերմակ, ո՛չ դեղին, ո՛չ կարմիր, ո՛չ էլ վարդագույն: Ավելի ճիշտ՝ այդ բոլոր գույները կային նրա թերթիկներին...

Ծաղկի ծննդյան օրվան նվիրված տոնախմբությունը կշարունակվեր, եթե Թեղենիս սարի կատարից սևակնած մի ամպ դանդաղ չսահեր դեպի ծաղիկը: Բոլոր թիթեռներն ու բզեզները, որոնք եկել էին ծաղկի ծննդյան օրը շնորհավորելու, սև ամպը տեսնելուն պես թաքնվեցին թփերի տակ ու լռեցին:

- Ահա այն ծաղիկը, որի մասին մեզ ասել է անտառապահը,- շշնջացի ես:
- Դե ի՞նչ եք կանգնել, խմե՛ք նեկտարը,-անհամբերությամբ ասաց Չիկարելին:
- Համբերի՛ր, դեռ ժամանակը չէ,- Չիկարելիին հանգստացրի ես ու նայեցի չորսբոլորս:

Ծաղկից մի քանի քայլ հեռավորության վրա գտնվում էր ցամաքած աղբյուրը: Աշխարհում ցավալի բաներ շատ կան, որ տխրեցնում են մարդկանց, և այդ ցավալի բաներից մեկն էլ երևի այն է, երբ մարդը ցամաքած աղբյուր է տեսնում...Չէ՞ որ մի ժամանակ երկրի ընդերքից բխած այդ հրաշքը կարկաչելով վազել է դաշտերով, զովացրել պապակ հնձվորին, բարություն բաժանել բոլորին: Իսկ հիմա չկա: Ընդմիշտ լռել է...

-Նայի՛ր, նայի՛ր, ամպը մոտենում է մեզ,- ասաց Չիկարելին ու ամուր բռնեց ճկույթս:

- Մի՛ վախենա, դա անձրևաբեր ամպ է... Նա բարի է, նրան սպասում են բոլոր ծաղիկներն ու խոտերը,- ասացի ես ու Չիկարելիին դրեցի բաճկոնիս գրպանը:

Ծաղիկը ժպտաց: Ու հենց այդ պահին, ինչպես ասել էր անտառապահը, տաք անձրև ակսվեց: Ես մոտեցա ծաղկին ու նրա ականջին շշնջացի անտառապահի ասած երեք բառերը: Ծաղիկն օրորեց գլուխը, բացեց իր սիրտը ու մի կաթիլ նեկտար կաթեցրեց իր թերթիկներից մեկի վրա: Ես նեկտարը դրեցի լեզվիս ծայրին...

Աղերսագին հառաչանքներ լսվեցին:

Ես վազեցի դեպի աղբյուրի ակը: Եվ ահա այդտեղ էր, որ փոքրացա, հավասարվեցի Չիկարելիին: Նա կանգնած էր իմ կողքին, ինչպես հավասարը հավասարի մոտ: Աղբյուրի ակի մեջ մի կլոր ու ողորկ քար սկսեց երկանքի պես պտտվել: Ես ձեռքս դրեցի այդ քարին ու բարձրաձայն ասացի.

- Քա՛ր, ճամփաս մի՛ փակիր:
  Քարը վնգոցով ակից դուրս թռավ, ու մեր դեմ բացվեց մի մութ խոռոչ:
- Ներս մտնենք,- Չիկարելիի ձեռքից բռնելով՝ նրան ներս քաշեցի ես:
  Առաջին վայրկյաններին ոչինչ չէինք տեսնում, գնում էինք մթան մեջ խարխափելով: Հետո բացվեց նեղ ու քարքարոտ մի ճանապարհ, որը լուսավորված էր կապտաշաղախ լույսով: Մենք կանգնեցինք, շունչ առանք:
- Իմ պատճառով դուք էլ փորձանքի մեջ ընկաք... Ի՞նչ է լինելու, ի՞նչ,- լացը զսպելով՝ մրմնջաց Չիկարելին:
- Հիմա այդպիսի բաներ խոսելու ու մտածելու ժամանակը չէ. ամենավատ բանը վախկոտ լինելն է: Մարդը նրանով է մեծ, որ հաղթել գիտե... Գնացինք...

Անձնական համար՝_____ ԱԱՀ՝ _____

Պատասխանել առաջադրանք 1-ի հարցերին – 5-րդ դասարան

1. Ելնելով տեքստի բովանդակությունից՝ ընտրի՛ր վերնագիր։

2.Ո՞ր տարբերակը չի համապատասխանում գրվածքի բովանդակությանը.

Աշխարհի ցավալի բաներից մեկը ցամաքած աղբյուր տեսնելն է, քանի որ...

ա/ Այն խոխոջյունով վազել է դաշտերով։

բ/ Հովացրել է ծարավ հնձվորին։

գ/ Բարություն է տարածել։

դ/ Իրականացրել է մարդկանց երազանքները։

3.Գրի՛ր երեք բառ, որոնք բնութագրում են ծաղիկին։

_____

4.Գտի՛ր և գրի՛ր այն տողերը, որոնցում խոսվում է վախկոտության և խիզախության մասին։

_____

_____

5. Ի՞նչ իմաստով է գործածվել **ակ** բառը։

ա/ Մեքենայի անիվ

բ/ մարդու աչք

գ/ ակունք, ջրի սկիզբ առնելու տեղը

դ/ բողբոջ

6.Ի՞նչ թեմա է քննարկվում գրվածքում։

ա/ Բարության և մարդասիրության

բ/ անտարբերության

գ/ նախանձի և անբարյացակամության

դ/ մեծամտության և եսասիրության

7.Քո կարծիքով ի՞նչ բառեր շշնջաց հեղինակը ծաղկի ականջին։

_____

8.Ինչո՞ւ չկայացավ ծաղիկի ծննդյան տոնակատարությունը։

9.Ինչպիսի՞նն էր անձրևաբեր ամպը. ովքե՞ր էին սպասում նրան։

10. Գտի՛ր **ուրախ, երջանիկ, անձրևաբեր, նեկտար, ցավալի** բառերի հոմանիշները՝ Անձրևածին, անձրևահոս, անճառագայթ, անձրևանոց, բախտավոր, երանավետ, ապերջանիկ, մեղրահյութ, անմահական, վշտալի, հիվանդագին, զվարթ, խնդուն, բերկրաձայն։

Անձնական համար՝_____ ԱԱՀ՝ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2.

Մկրտիչ Կորյուն

ՄԻ ԱՉՔԻ ՏԵՂ՝ ԵՐԿՈՒՍԸ

Հզոր առյուծը ճեմում էր մի օր
Անտառների մեջ թարմ ու զովասուն,
Երբ դեմն է ելնում Աղվեսն ալևոր,
Եվ աղերսանքով այս խոսքերն ասում.

- Ո՛վ տեր արքա, փրկի՛ր դու ինձ
Իմ չար ու նենգ հարևանից։
Աղվես է նա, ինձ ցեղակից,
Բայց զրկում է ինձ իմ որսից։

-Քո ցեղակից աղվեսի դեմ իմ պատիժը կխստանա,
Ինչ վնաս որ քեզ ցանկանա, երկու վնաս նա կստանա։

- Ա՜խ,այդ ի՜նչ խելոք վճիռ կտրեցիր,
Լավ է, թե միայն ասածդ անես,
Դե, արքա՛, շտապ իմ աչքը հանի՛ր,
Որ իմ ցեղակցի երկու աչքն հանես…
Ու Առյուծ արքան իր գործն է անում,
Տալիս աղվեսի զույգ արքն է հանում։

-Վա՜յ, Առյուծ արքա, այս ի՞նչ արեցիր,
Ինչո՞ւ իմ երկու արքն էլ հանեցիր։
-Ով ընկերոջն իր վատ բան ցանկանա,
Մեկի տեղ երկու վնաս կստանա,-
Պատասխանում է մեր Առյուծ արքան
Եվ շարունակում նորից իր ճամփան։

Անձնական համար՝_____ ԱԱՀ՝ _____

Պատասխանել առաջադրանք 2-ի հարցերին – 5-րդ դասարան

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը։

1. Աղվեսը Առյուծին դիմեց, որովհետև՝

ա/ Հոգնել էր իր հարևանի նենգությունից

բ/ Ուզում էր հաճոյանալ Առյուծին

գ/ Չարամիտ էր և նախանձ

2.Ինչու՞ Առյուծը չկատարեց Աղվեսի խնդրանքը

ա/ Նա չէր սիրում Աղվեսին

բ/ Նա չէր հավատում Աղվեսին

գ/ Նրան դուր չեկավ Աղվեսի նենգությունը

3.Ինչու՞ և ինչպե՞ս պատժվեց Աղվեսը. առակում գտի՛ր ճիշտ պատասխանը։

_____

_____

4.Ի՞նչ է սովորեցնում առակը. գրի՛ր քո մեկնաբանությունը։

_____

_____

_____

5.Գրի՛ր չար, նենգ, ցեղակից, արքա, ճեմել բառերի հոմանիշները։

6.Տեքստում ի՞նչ իմաստով է օգտագործվել **խելոք** բառը.

ա/ համեստ

բ/ հնազանդ

գ/ խելացի

7.Դու ինչպե՞ս կվարվեիր, եթե ընկերոջդ մասին չարախոսեին։

_____

_____

8.Քո կարծիքով Առյուծը ճի՞շտ վարվեց Աղվեսի հետ։

_____

_____

9.Ինչո՞ւ են առակում Առյուծն ու Աղվեսը գրվել մեծատառով։

10.Գտի՛ր առակի հիմնական միտքն արտահայտող նախադասությունը։